№ 72 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ԱՊՐԻԼԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 9 ԱՊՐԻԼԻ № 72

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 8 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

Պրեմիաներ «ՄՇԱԿԻ» տարեկան բաժանորդները, որոնք 1915 Թ. ընթացքում լրիւ վճարած կլինեն 10 ր. բաժանորդավճարը, կը ստանան որպէս պրէմիա հետեւեալ նոր լոյս տեսնելիք գրքերը. 1) «Տանջվածը»—մեծ վէպ Շաքրիարի հայկ. յեղափոխ. կեանքից, 2) «Հայկական հարցը»—լուսաբանված դոկումենտներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Գնդապետ Աղէքսանդր Դաւթեան Սուրէնեանցը յայտնում է ի գիտութիւն բարեկամների և ծանօթների, որ այսօր, իր անմոռանալի քոյր

ՍՕՖԻԱ ԴԱՒԹԵԱՆ ՍՈՒՐԷՆԵԱՆՑԻ

մահվան տարելիցի պատճառով, Վէրայի գերեզմանատան ս. Խաչ եկեղեցում, պատարագից յետոյ կատարվելու է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ և ապա լինելու է հանգուցեալի գերեզմանի վրա արժանի օրհնութիւնը։ Պատարագը սկսվելու է առաւօտեան ժամը 10-ին, իսկ հոգեհանգիստը ժամը 12-ին։

222. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
ՌՈՒՍԱՑ ԴՐԱՄԱ
ԴԻՐԵԿՑԻԱ Պ. Պ. ԲԱՐԱՏՈՎԻ ԵՒ ՊՈԼՈՆՍԿԻԻ
Այսօր, հինգշաբթի, ապրիլի 9-ին, կը խաղացվի
ՕԹԵԼԼՕ
Ողբերգութիւն 5 արար. հեղ. Շէքսպիրի։
ՕԹԵԼԼՕՅԻ դերը ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ կը կատարէ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԸ։
Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։ առ. 221. 1—1

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ հովանաւորութեան ներքոյ գտնվող
ՀԱՅ ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ,
ընդունած լինելով Էջմիածնի համաժողովի որոշումները՝ փախստական-գաղթականներին օգնելու մասին և նրա մշակած գործունէութեան ծրագիրն ամբողջովին, առանց որեւէ վերապահումների, շարունակում է ընդունել նուիրատուութիւններ վերոյիշեալ ծրագիրն իրագործելու նպատակով։

Նուէրները կարելի է ուղղել 1) Ընկերութեան նախագահին (Тифлисъ, Хану Сагнакскому). 2) Ընկերութեան գանձապահին (Тифлисъ, Юльѣ Спендіаровой—Евангуловская, 8) և 3) «Մշակի» խմբագրութեան անունով (Редакція газеты «МШАКЪ» для передачи «НПАСТАМАТУЙЦУ»). առ. (օ. մ.) 197. 5—4

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ
առաջիկայ ուսումնական տարին մտնել ցանկացողները պէտք է ներկայացնեն խնդիրներ ապրիլ եւ մայիս ամիսների ընթացքում—երեքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերը՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը։
Խնդիրներին պէտք է կցվեն մետրիքական և ծաղկի վկայականներ. մտնողների տարիքը պիտի լինի 12-ից մինչև 16։
Քննութեան օրը կը յայտարարվի։ առ. (կ.) 220. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, ապրիլի 9-ին
Բարեհաճ մասնակցութեամբ պ. պ. Ա. ՕՋԱՆԵՋԱՇՎԻԼԻԻ, Սէվիի, Գէորգի, սոլիստ պ. Մ. Կրասնիկեանի և երգեցիկ խառն խմբի
կը կայանայ
ԱՍԻԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
I
ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԲԱԺԻՆ
բաղկացած 2 բաժանմունքից — խմբական երգերից և սոլիստներից։
Դաշնամուրի վրա կը նուագակցէ
Ռ. ՏԻԳՐԱՆԵԱՆ
Խառն խումբը ղեկավարութեամբ
ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ
II
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՊԱՐԵՐ
Անտրակտներում կը նուագէ սազանդարների խումբը։
Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ «Կաֆէ-Ցենտրալում» և ժողովարանի շվէյցարի մօտ։ Ժողովարան մտնելու առանձին վարձ չը կայ։
Պատասխանատու կարգադրիչ՝
Գ. ՄԻՐԱՂԵԱՆ
առ. 223. 1—1

ԲԺԻՇԿ
Շուշանիկ Նաքաբեան
(Մասնագէտ կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—3. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Բուլչեվսկայա փ. № 1
Հեռախօս 10—58.
(Ն.Հ.Կ.) առ. 784. 100—86

ՆԵՐԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բուլչեւսկայա 13, տելէֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանանց հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութինեան
Ն. Ն. Վեսելովզորով
Վ. Ա. Ջակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշեր
Ս. Գ. Շահպարոնեանց
(Բ կ.) առ 970. 100—44

ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԴԷՄ

Վերջին օրերը Թիֆլիսում ստացվեցին հեռագրեր — ոչ-պաշտօնական սակայն—խփված Բուլղարիայից, Հայկական Բիւրօյի անունով, թէ Փոքր Հայքում (Կիլիկիայում) և Թիւրքաց Հայաստանի միւս մասերում սաստիկ հալածանքներ են սկսվել հայերի դէմ և նոյնիսկ կոտորածներ են տեղի ունեցել։

Ահա այդ հեռագրերի բովանդակութիւնը.

1) «Սիստեմատիկ կոտորած է Էրզրումում, Զէյթունում և շրջակայքում։ Արիւնահեղ ընդհարումներ են Բիթլիսում, Վանում և Մուշում։ Կիլիկիայում ապստամբութիւն է։ Բռնութիւններ, կողոպուտներ և սպանութիւններ են Ակնում և ամբողջ Փոքր Հայքում։ Ամբողջ ժողովուրդը անտեսապէս քայքայված է։ Սուլթանը իրադէ է հրատարակել զինաթափ անելու հայ զինուորներին։ «Ազատամարտ» լրագիրը փակված է։ Նրա խմբագիրներից մէկը աքսորվեց Անգորա։ Բողոքեցէք չէզոք պետութիւնների առաջ, որպէսզի դադարեցնեն ընդհանուր կոտորածը»։

2) «Տրապիզոնում երեք օր ջարդ է տեղի ունեցել։ Ջարդը այն աստիճան ուժեղ էր, որ հարկադրված կանչել են զօրքեր»։

Դժուար է ասել, թէ որքան ճիշդ են այդ լուրերը, քանի որ պաշտօնական հաստատութիւն չը կայ և Հեռագրական Գործակալութիւնը ոչինչ չէ հաղորդել այդ մասին. սակայն եթէ ի նկատի ունենանք Թիւրքիայի այժմեան դրութիւնը, եթէ ի նկատի ունենանք, որ հայերը ներկայ պատերազմի մէջ՝ ամեն տեղ իրանց համակրութիւնը արտայայտեցին Ռուսաստանին և նրա դաշնակիցներին, պէտք է սպասել, որ Թիւրքիան, իբրև մի անբարեկարգ և անկուլտուրական երկիր, իր բարկութիւնը թափէ խաղաղ և անպաշտպան քրիստոնեայ ժողովրդի և մանաւանդ հայ ժողովրդի վրա։

Արդ. ի՞նչ անել, ի՞նչ ելք գտնել։ Քանի դեռ պատերազմը չէ վերջացել, պատժել Թիւրքիային դեռ անհնարին է. Մնում է բողոքել՝ չէզոք պետութիւնների առաջ, օրինակ՝ Ամերիկայի, որ յանուն մարդասիրութեան և ընդհանուր միջազգային օրէնքների զսպէն Թիւրքիայի կառավարութիւնը։ Մենք գիտենք արդէն, որ ամերիկահայերի առաջնորդը այդպիսի քայլ վերջերս արել է։

Եթէ կոտորածների լուրը ճշդվի, պէտք է սպասել գաղթականութեան մի նոր զօրեղ հոսանքի, և մեր հասարակութիւնը պէտք է պատրաստ լինի նոր զոհողութիւնների, նոր օգնութիւնների։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ապրիլի 4-ին ծովամերձ ուղղութեամբ հրացանաձգութիւնը շարունակվեց։

Արդուինի ուղղութեամբ մեր զօրքերն աջողութեամբ առաջանում են դէպի հարաւ։

Մնացած ուղղութեամբ ռազմի ընդհարումներ չեղան։

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Ծովամերձ ուղղութեամբ ապրիլի 5-ին հրացանաձգութիւնը շարունակվեց։

Մնացած ուղղութեամբ փոփոխութիւն չը կայ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Երեկ Սև ծովի մեր ականանաւերի 1-ին խումբը ռմբակոծեց Արխավէի Թիւրքաց գիւղերը, Սումլի և Վիջէ գիւղերի մօտ։

ԱՆԳԼՕ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 ապրիլի

ԼՈՆԴՈՆ.— Պրէս-Բիւրօն յայտնում է Կահիրէից. «Երեք աէրօպլան, բարձրանալով Սուէզի ջրանցքի մօտ, հետախուզումներ կատարեցին Էլ-Արիշից դէպի հարաւ 25 մղոն հեռաւորութեան վրա, ուր աջողութեամբ նետեցին 9 ռումբ։ Օդագնացները նկատել են մօտ 200 վրան։

«Էլ-Միրի այն կողմը՝ թշնամու զօրքեր չեն նկատվել»։

ԴԱՐԴԱՆԷԼԻ ՌՄԲԱԿՈԾՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 ապրիլի

ՍՕԼՈՒՆ.— Միտիլէնից հաղորդում են, որ երեկ դաշնակից նաւատորմը ռմբակոծեց մի քանի բերդ Դարդանէլում։

Թիւրքաց մի աէրօպլան ռումբեր նետեց դաշնակից նաւատորմի ռազմանաւերի վրա։

Դաշնակից մի քանի օդագնացներ հետապնդեցին Թիւրքաց օդագնացին մինչև նեղուցների մուտքը։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6 ապրիլի

ԱԹԷՆՔ.— Ճշդվում է, որ երէկ Թիւրքաց «Աշքիէ» նաւը ենթարկվեց անգլիական երեք յածանաւերի յարձակման, երբ ականներ էր ձգում Վուրլայի մօտ Զմիւռնիայի նաւահանգստի մուտքից ոչ հեռու։ Նաւը փորձեց անյայտանալ Քիոսի ծովափի մօտ, բայց խորտակվելով ափ շպրտվեց։ 30 նաւաստիները և 3 գերմանական օֆիցեր կալանաւորվեցին յոյնաց կառավարութիւնից։

ՍՕԼՈՒՆ.— Դաշնակիցների հիդրօաէրօպլանները ամեն օր հետախուզումներ են կատարում Զմիւռնիայի վրա։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Կ. Պոլսից տեղեկացնում են, որ «Գեբէն» յածանաւը վերջնականապէս վերանորոգված է, մտաւ Սև ծովը փորձնական վարժութեան համար և վերադարձաւ Կ. Պոլիս։

ՍՕՖԻԱ.— Կ. Պոլսից հաղորդում են, որ ֆոն-դէր-Գոլց փաշան նշանակված է Թիւրքաց 1-ին զօրաբանակի հրամանատար։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Կ. Պոլսից հաղորդում են, որ Թալէաթ-բէյը անակնկալ մեկնեց Սօֆիա։ Այդ բանին վերագրում են մեծ նշանակութիւն, որովհետև նա կապ ունի այն բանակցութիւնների հետ, որոնք տեղի են ունենում Թիւրքաց և բուլղարական կառավարութիւնների միջև։

Ֆոն-դէր-Գոլցը և գերմանական դեսպանը յորդորում են Թիւրքաց կառավարութեանը բանակցութեան մէջ մտնել Բուլղարիայի հետ և նրան կոնկրէտ առաջարկութիւն անել, թեքելու նրան պատերազմի մասնակցութեան յօգուտ աւստրօ-ունգարների։

Իր վերադառնալու օրից ֆոն-դէր-Գոլց փաշան երկու անգամ ընդունվեց սուլթանից, որին յանձնեց Վիլհէլմ կայսրի նամակը։

Կ. Պոլսից հաղորդում են, որ վառելանիւթի պակասութեան հարցը ստանում է սուր բնոյթ։ Քաղաքամերձ երկաթուղային հաղորդակցութիւնը խիստ կրճատված է։ Մանր նաւերը համարեա դադարեցրել են երթեւեկութիւնը։

ԱԹԷՆՔ.— Միտիլէնից տեղեկացնում են, որ Դարդանէլի, Սարոսի և Զմիւռնիայի միաժամանակ ռմբակոծութիւնը շուտով կը սկսվի։ Աւելի քան 70 խոշոր շոգենաւ զօրքերով կենտրոնացած են Մուդրոսում։

Անգլօ-ֆրանսիական նաւատորմը ռմբակոծում է Սարոսում Թիւրքերի ամրութիւնները և նեղուցի ծովափը։

Կովկասեան զօրաբանակի շտաբը պաշտօնապէս յայտարարում է.

Ի նկատի ունենալով չարամիտ անձանց տարածած լուրերը, թէ Թիւրքերը Օլթին գրաւել են, յայտարարվում է, որ Օլթին և Արդուինը, նաև այդ երկու կէտերի միջև ընկած ամբողջ սահմանամերձ տարածութիւնը գտնվում է մեր զօրքերի ձեռքում։

(Լրագիրներից)

◆ «Р. У.»-ի տեղեկութիւնների համաձայն, Կ. Պոլսում խոլերա է երևացել։

◆ «Р. У.»-ն հաղորդում է, որ ֆոն-դէր Գոլց փաշան յանձնեց սուլթանի նամակը Վիլհէլմ կայսրին, որ գովասանքով խօսեց Թիւրքաց արտիլէրիայի մասին, որը վանեց դաշնակիցների նաւատորմի յարձակումը մարտի 5-ին, և հաւատ արտայայտեց, թէ Թիւրքիան պատերազմից կելնէ մեծածաւալ՝ մահմեդական ամբողջ աշխարհի հզօր ներկայացուցիչ։

◆ «У. Р.»-ն հաղորդում է, որ Ցարգրադի աւստրիական դեսպանը Թիւրք օֆիցերների մասնակցութեամբ կազմակերպում է մակեդոնական Թիւրքերի հրոսակախմբեր։ Այդ հրոսակախմբերին տրվում է զէնք ու դրամ, և նրանք ուղարկվում են սերբիական սահմանամերձ վայրերը՝ մահմեդականներին սերբերի դէմ ապստամբեցնելու պրօպագանդայի համար։ Հրոսակախմբերին ուղեկցում են գերմանացի օֆիցերներ։

◆ «Н. В.»-ն գրում է, որ ֆոն-դէր-Գոլց փաշայի վերադառնալուց յետոյ Կ. Պոլսում կայացաւ կարևոր զինուորական խորհրդակցութիւն։ Գոլց-փաշան պնդեց, որ նոր պատերազմական փոխառութիւնը թոյլ կը տայ Գերմանիային խոշոր դրամական օգնութիւն հասցնել Թիւրքիային։ Միևնոյն ժամանակ ֆոն-դէր-Գոլցը յայտնեց, որ Սերբիայի վրա նոր յարձակում անհնարին է, որովհետև Աւստրիան և Գերմանիան չունեն դրա համար և ոչ մի ազատ զօրաբաժին, ու հազիւ են դիմադրում դաշնակիցների գրոհ արշաւանքին։ Թալէաթ-բէյը ի պատասխանի դրան կշտամբանք արտայայտեց Գերմանիային, որ բարձի թողի է անում կրիտիքական րօպէին Թիւրքիային, որ կը դրդէ նրան կնքել սեպարատ հաշտութիւն առաջ, քան անձնատուր կը լինի Կ. Պոլիսը։

◆ «Б. В.»-ին հեռագրում են Օդեսայից, որ Տենէդոս կղզուց հաղորդում են Բուլաիրի շրջանում դաշնակիցների կատարած աջող գործողութիւնների մասին։ Չորս յածանաւ ոչնչացրել են 13 Թիւրքական թընդանօթ ու հրդեհել են Բուլաիրի բերդերի վառօդի պահեստը։

◆ «В. В.»-ն հաղորդում է. «Ֆոն-դէր Գոլց փաշան հանդիսաւորապէս յանձնեց սուլթանին Վիլհէլմի ուղարկած առաջին կարգի երկաթեայ խաչը»։

◆ «Рѣчь»-ի ասելով, Թիւրքերը հրաժարվել են Սուէզի ջրանցքն անցնելու մտքից նրանից յետոյ, երբ անգլիացիք Եգիպտոսը դարձրին յենակէտ Դարդանէլի դէմ կռուելու համար։

◆ Կ. Պոլսում սպասվում են ահեղ դէպքեր։ Հակագերմանական շարժումը սպառնում է բռնկվել յեղափոխութեամբ։ Զօրքի մէջ նոյնպէս աճում է հակագերմանական տրամադրութիւնը։

◆ Թիւրքիան արգելել է ռուս գերիներին նամակներ ուղարկել և ստանալ իտալական դեսպանատան միջոցով։

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

«Нов. Вр.»-ի № 14030-ում տպված է Պետրոգրադի Հեռագրական Գործակալութեան հետեւեալ հեռագիրը՝ առնված Ռէյտերի գործակալութիւնից.

«Համայնքների պալատում պատգամաւոր Վիլեամս հարցապնդում արաւ, թէ մեծ-բրիտանական կառավարութիւնը մտադիր է արդեօք պատերազմը վերջանալուց յետոյ ջանքեր գործ դնել ապահովելու Թիւրքաց Հայաստանի հայ ազգաբնակութեան ինքնավարութեան մի փոքր մասը, նման նրան, ինչ որ ռուս կառավարութիւնը խոստացել է Լեհաստանին։

«Լորդ Պրիմրոզ հաւաստիացրեց Վիլեամսին այն մասին, որ մեծ բրիտանական կառավարութիւնը հոգ կը տանի Թիւրքաց Հայաստանի հայ ժողովրդի շահերի մասին, բայց ներկայ բոպէին ոչինչ որոշ առայժմ անկարելի է տալ միջազգային ապագայ համաձայնութիւնների վերաբերմամբ»։

ԻՆՉ ՎԻՃԱԿԻ ՄԷՋ ԵՆ ՀԱՊԱ ԹԻՒՐՔԻՈՅ ՁԵՌՔԸ ՄՆԱՑԱԾ ՄԵՐ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

I

Մեր ռուսահայ եղբայրներուն և պաշտօնական անձանց շատերու կողմէն գաղթականներուս ուղղեալ ազնուօրէն յաճախակի հարցումն է՝ «...Ի՞նչ վիճակի մէջ են հապա՝ Թիւրքիոյ կամ Հայաստանի խորերը մնացող մեր հայ եղբայրները»։

Ասիկա՝ փախստականներուս բարոյական վէրքերը արիւնոտող և ամբողջ հայութեան հոգին իր ալքերէն ցնցող հարցումն է, զոր այս բոպէիս անտարակոյս ամեն հայ-անհատ կը փորձէ իր մէջը զգալ։ Ցեղերնուս ամենագլխաւոր զանգուածը՝ գաւաղէն արձակուած իր դարաւոր ոսոխին (Թիւրքին) կլափին մէջն է ահա՝ շուրջ 8 ամիս է, որ դժբաղդ թիւրքահայութիւնը զրկուած աշխարհի յարաբերութիւններէն՝ իր ամբողջ զաւակներով, տունով-տեղով, մամուլով, պատրիարքարաններով, յարանուանութիւններով, կրթական հաստատութիւններով, երկրագործական և առևտրական գործերովը միասին ճզմուած ու քայքայուած դրութեան մը մէջ կը քաշքշէ օրհասական կեանքը։

Այնպէս որ՝ աշխարհէն այժմ կղզիացած ցաւատանջ մեր ազգակիցներուն կը դառնայ, ինքնաբերաբար, մեր հայեացքը միշտ, և չենք կարծեր, որ տակաւին գտնուին հայեր, որոնք շահագրգիռ զգացմունքով չվերաբերին առ Թիւրքահայութեան վիճակը։ Որովհետև այս պահուս Թիւրքիայի մէջ՝ ոչ հայոց բարեացակամ մեծ տէրութեանց դեսպանները կը մնան և ոչ նոյն պետութեանց կողմէ Թիւրքին բարբարոսութիւնը սանձահարող հսկողութիւնը։ Այլ՝ պահուըը կտորող Թիւրքիան իր ասկեարներովը ու քիւրդերովը ասպարէզի վրայ է, ինչպէս կամենայ՝ այնպէս կը ձևէ և կը չափէ, իր յաղթուողի ամբողջ վրէժը հայերէն պիտի առնէ։ Պատերազմի ատեն միշտ սովոր են Թիւրքերը կրկնելու՝ «Եթէ հայերը չըլլայ, մեզի դէմ կռուող չըլլար...», ու այդ պատրուակով հայերու ջարդերը՝ գլխաւորաբար պատերազմներու միջոցին տեղի ունեցած են... Իսկ ներկայ պատերազմին ատեն, որուն մէջ պատրուակներ ճարելը աւելի հեշտ է, անտարակոյս մոլեռանդութեան մէջ կուրցած Թիւրքութիւնը պատրուակի այս նոր զէնքերովն աւելի մեծ փորձանք պիտի դառնայ Թիւրքահայութեան գլխուն։ Այդ ամեն պարագաներն են, որ Ռուսաստանի և այլ բարեկամ պետութեանց մէջ ապահով ապրող հայերուս սիրտը խաղաղ չեն թողուր։ Շատ բնական ու մարդկայնական է՝ ոչ միայն անհատապէս, այլ եթէ կարելի էր հնարաւոր դարձնել՝ պաշտօնապէս մշակել այն հարցը, թէ ինչ վիճակի մէջ են հապա Թիւրքիոյ ձեռքը մնացած մեր եղբայրները։

Ինչպէս յիշեցինք, 8 ամիսէ ի վեր մեր եղբայրներուն կղզիացումը և անոնց շուրջ բռնակալական պատնէշը այնքան ամուր է, որ ոչ ոք ստուգապէս տեղեկութիւն կրցաւ դուրս ձեռք բերել, թէ դժոխային այն վարագոյրին ետև Թիւրք պետութիւնը նիրոնական ինչ խաղեր է, որ կը խաղայ հայ ազգին մեծամասնութեան գլխուն։ Այդ առթիւ մեր ամենուս իմացած տեղեկութիւնները, պէտք է խոստովանիլ թէ, միմիայն սարէն, ձորէն՝ գաղթականներուս տարտամ փոխանցուած տեղեկութիւններն են և կամ պատերազմական դիրքերէն փախած ու գերի բերուած Թիւրքահայ զինուորներուն տեղեկութիւններն են, որոնք բնականաբար բոլորովին անբաւական կը մնան Թիւրքահայութեան այժմու իսկական կացութեան վրայօք ընդհանուր տեղեկութիւններ ըլլալու, քանի որ մեզ հասած լուրերը Ռուսիոյ սահմանամերձ գաւառներուն կամ պատերազմական դիրքերու լուրերն են, մինչև յուլիս 21-էն ի վեր (1914) բռնազուրկ կերպով սէֆէրբէրլիք և իդարէի-ուրֆի (պատերազմական վիճակ) հրատարակուելուն շնորհիւ Թիւրքիոյ մէջ երթալով հաղորդակցութիւններն ու տեղեկութիւնները ընդհատեցան։ Իսկ կառավարական մանիֆեստները և ոչ մէկ մահկանացուի մատչելի կրնային ըլլալ, մանաւանդ ռուս-թիւրքական պատերազմը սկսելուն՝ այլ ևս ամեն կեանք ու շարժում կաշկանդման դատապարտելով՝ «ամեն ինչ պատերազմին պէտք է պատկանի»-ն հրատարակուեցաւ։ Այդ սիստեմին տակ մենք ականատես եղանք, որ ամեն անհատ հազիւ կրնար իր մորթին վրայ մտածել։ Ամէնէն առաջ (օգոստոս—հոկտ.) արդէն պատրիարքարանն, առաջնորդարաններն և ազգ. վարչութիւնք խափան լռեցուցին։ Լրագիրները (օրաթերթերը) մէկ մէկ խեղճուկ, դժգոյն երեսիկներու վերածուած էին, որոնք Վօլֆի գործակալութեան սուտերը հազիւ կրնային պարունակել, շատ-շատ՝ սուլթանին ուղղեալ փոքր ինչ գովասանքներ։

Քանի որ Թղթատարութեան մինիստր կը մնար՝ հայազգի Մարտիկեան էֆենդին *), մարդը բաւական կը պայքարէր, և անոր շնորհիւ վիլայէթներուն ու Կ. Պօլսոյ միջև նամակներ կրնայինք փոխադրել։ Կրնայինք այդ միջոցաւ իմանալ վերջապէս, թէ վիլայէթներուն մէջ գործադրուած օրէնքը՝ ամենևին նման չէր Կ. Պօլսոյ մէջ գործադրուածին... և այլն։

Հետևաբար օրէնքներուն փոփոխականութիւններն ու խստութիւնները պատերազմի ատեն՝ տարակոյս չկայ որ աւելի սաստկացան։ Ուրեմն տարակոյս չկայ նաև, որ այլազան պայմաններու տակ՝ այլազան նեղութիւններու ենթակայ են մեր այնտեղի եղբայրները՝ այս պահուս։

Արդ՝ այսպէս՝ երբ հայ հասարակութիւնը մէկ կողմէն՝ Թիւրքիայէն և Պարսկաստանէն ճողոպրած հօս ապաստանած իր չքաւոր եղբայրներուն հոգն ստանձնած է, միւս կողմէն անդադար հարցափորձելով իմանալ կը բաղձայ բռնակալութեան ճիրաններուն միջև մնացած իր միւս հարազատներուն կացութիւնը. մենք կը փորձենք (առ ի չգոյէ աւելի հաստատ տեղեկութեանց) այս սիւնակներուն միջոցաւ ըստ կարելւոյն պարզել Թիւրքահայութեան կարևորագոյն շրջանակներու կենցաղն ու յարաբերական վիճակը, որով կարելի պիտի ըլլայ պարագաներու հետևողութեամբ և բաղդատաբար մակաբերել նոյն շրջանակներու մէջ ապրող հայութեան արդի կացութիւնը։

Գաղթական

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Լոյս ապրիլի 5-ի գիշերը Թշնամին, կրելով մեծ կորուստներ, նորից յարձակումներ գործեց մեր զօրքերի դէմ Տելէպօչի արևելեան կողմում. Հակայարձակումով մենք հարկադրեցինք Թշնամուն շտապով ետ քաշվել իրանց խրամատներից, որի ժամանակ աւստրիական մի գումարտակ անձնատուր եղաւ մեզ ամբողջ կազմով։

Պարզվեց, որ Պօլէն գիւղի մօտի դիրքը վերցնելիս մեր զօրքերը գերի են բռնել 1155 զինուոր, աւելի քան 20 օֆիցէր և ձեռք են ձգել 6 գնդակացիր։

Ապրիլի 4-ին մենք նորից վանեցինք հակառակորդի երկու յարձակումները Ստրիյի ուղղութեամբ։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Պաշտօնական։ Գլխաւոր շտաբի գլխաւոր վարչութիւնից.

Ապրիլի 5-ին մենք վանեցինք Թշնամու յարձակումները Տելէպօչի և Պօլէնի շրջանում։

Ստրիյի ուղղութեամբ Թշնամու յարձակումը Օրավչիկի մօտ սկզբում ունեցաւ աջողութիւն, սակայն երեկոյեան դէմ մեր զօրքերը, ձեռնարկելով հակայարձակման, յամառ կռուից յետոյ նորից գրաւեցին այդ դիրքը և գերի բռնեցին Թշնամու մեծ թիւ։

Ռօժանկի մօտ մեր հետիոտն գնդերը սուինային կռուից յետոյ վերցրին հարիւրաւոր գերիներ ու ձեռք ձգեցին 4 գնդակացիր, 1 մինոմէտ։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ՊԱՐԻԶ.—Գերմանական մի «Տաուբէ» երէկ առաւօտ երևաց Բէլֆօրի վրա և նետեց 2 ռումբ։ Վնասներն աննշան են։

ԼՈՆԴՈՆ.—«Բրէս Բիւրօն» հաղորդում է, որ ապրիլի 4-ի երեկոյեան սկսված աջող գործը առաջ տարվեց գիշերը չափազանց կարևոր դիրք «60-րդ բլուր» կոչվածը վերջնականապէս գրաւելով, որ գտնվում է Ցիլլեբէկից 2 մղոն դէպի հարաւ և Իպրից դէպի արևելք։ Այդ բլուրը իշխում է Նրանից դէպի հիւսիս ու հիւսիս-արևմուտք ընկած ամբողջ տարածութեան վրա։ Կռիւ սկսվեց ականի աջող պայթումով, որից զոհվեցին շատ գերմանացի. մենք գերեցինք 50 հոգի։

Ապրիլի 5-ի առաւօտը Թշնամին ուժեղ հակայարձակման դիմեց, բայց վանվեց ծանր կորուստներով։ Գերմանացիք արշաւում էին խիտ շարքերով, որ հնարաւորութիւն էր տալիս մեզ աջող կերպով գնդակահարել։ Թշնամու յուսահատական ճիգերը ետ խլելու բլուրը՝ անաջողութեան հանդիպեցին, և գերմանացիք կրեցին շատ ծանր կորուստներ։ Հարիւրաւոր դիակներ թափված էին մեր դիրքի առաջ։

Մենք վայր գլորեցինք նաև 2 աէրօպլան։

Պաշտօնապէս հաղորդվում է, թէ տաք թնդանօթային կռիւ է Սուասօնի շրջանում, Րէյմսի մօտ և Արգօններում։

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ԼՈՆԴՈՆ.— Ծովակալութիւնը հաղորդում է. «Մանիգա» նաւի վրա գտնված զօրքերի կողմից խեղդվել են 24 հոգի. պակասում են 27։ «Մանիգա» վնասված չէ։

ԼՈՆԴՈՆ.— Ծովակալութիւնը հաղորդում է, որ գերմանական մի ստորջրեայ նաւ ջրասուզեց «Վանիլլա» նաւը և ստիպեց հեռանալ «Ֆէրմօ» նաւին։ «Վանիլլայի» բոլոր նաւաստիները խեղդվեցին։

ՍՏՕԿՀՕԼՄ.— Շվէդական «Կաստոր» շոգենաւը ապրանքով բռնվել է գերմանացիներից և տարվել է Սվինեմիւնդէ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ՑԻՒՐԻԽ.— Շվէյցարիայում շաքարի պաշարը կը բաւէ ընդամէնը 2 ամիս։

Որովհետև արգելված է շաքար ներմուծել Գերմանիայից և Աւստրիայից, արգելվելու է պանիր, կաթ ու շօկօլադ արտահանել Շվէյցարիայից դէպի այդ երկիրները։

ՍՕԼՈՒՆ.— «Բալխարէքսաշ» շոգենաւով Իտալիայից բերվեցին մեծ քանակութեամբ ռազմամթերք ու պատերազմական աւտօմօբիլներ բուլղարական զօրքի համար։

ՀՌՈՄ.— Հրատարակվեց կարգադրութիւն, որի ուժով մինչև 1915 թ. դեկտ. 18-ը զինուորական մինիստրութեանը իրաւունք է տրվում զինուորական ծառայութեան կոչել ժամանակաւոր արձակուրդով օգտվող օֆիցէրներին և բոլոր զինուորականներին, նաև նրանց, որոնք ֆիզիքապէս առողջ լինելով հանդերձ թողել են զինուորական ծառայութիւնը։ Բացի դրանից, մինիստրութեանը իրաւունք է տրվում ընդունել օդագնացներ բոլոր տեսակի օֆիցէրներին, նաև այն քաղաքացիներին, որոնք պարտական չեն կրել զինուորական ծառայութիւն։

Գերմանացիների մասսայական մեկնումը շարունակվում է։

«Ջիօռնալէ դ'Իտալիան» հաղորդում է, որ Ֆրանց-Իօսիֆ կայսրը առանձին սուրհանդակի ձեռքով ինքնագիր նամակ էր ուղարկել պապին, որ նամակն ստացաւ 8 օր առաջ։ Երէկ Հռոմից մեկնեց Վիէննա մի անձն, որ յանձնարարութիւն ունի հասցնելու կայսրին պապի ինքնագիր նամակը։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.— Բէլգիական արտակարգ պատուիրակութիւնը մեկնեց ցնծագին հրաժեշտով։

ՕԴԵՍՍԱ.—Հանդիսաւոր նիստում համալսարանի խորհուրդը միաձայն որոշեց համալսարանի պատուաւոր անդամներ ընտրել Օգոստափառ Զօրահրամանատարին և բէլգիական արքայ Ալբէրտին։

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Ժող. լուսաւորութեան մին. խորհրդի կարգադրութեամբ բժիշկ ուսանողների քննութիւնները բժշկական մասնաժողովներում կրճատված են։

ՊԵՏՐՈԳՐԱԴ —(Ուշացած). Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հրահանգի մէջ՝ յանուն ուսումնարանական շրջանների հոգաբարձուների՝ հաղորդվում է, որ մինիստրների խորհուրդը համաձայնեց կրթական հաստատութիւններ ընդունել այն սլաւոն, ֆրանսիական ու իտալական ծագում ունեցող գերմանահպատակներին, աւստրիահպատակներին և ունգարահպատակներին, ինչպէս նաև քրիստոնեայ թիւրքահպատակներին, որոնց թոյլատրված է բնակվել իրանց մշտական բնակատեղիներում։

ՍՏՕԿՀՕԼՄ. — Երկրի պաշտպանողական միութիւնը շվէդական թագաւորին յանձնեց 2000 կռօն՝ հինգ հիդրօպլան ձեռք բերելու։

ՊԱՐԻԶ.—Եկաւ յունաց պրինց Գէօրգը։

ԿԱՀԻՐԷ.—Ալէքսանդրիայից եկաւ Վէնիզէլօսը։ Բազմահազար յոյն ամբոխը նաւահանգստում ի պատիւ նրա հսկայական ցոյց կազմեց։ Օդը թնդում էր «Կեցցէ՜ Մեծն Յունաստանը Վէնիզէլօսի հետ, կեցցէն Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան» բացականչութիւններից։

ՀՌՈՄ.—Վիէննայից հեռագրում են, որ այնտեղ կայացել է մեծ երթ իբր թէ տարած յաղթութեան առիթով։ Շքերթին մասնակցել են ամբողջ հոգևորականութիւնը կարդինալ Պիֆլի գլխաւորութեամբ, արքեպիսկոպոս Ալբէրտը և մօտ 30,000 մարդ։ Տաճարում կատարվել է մաղթանք, որից յետոյ կատարվել են աղօթքներ խաղաղութիւն ուղարկելու և պապի առողջութեան համար։ Այդ առիթով Հռոմի լրագիրները հարց են տալիս, թէ ո՞ր յաղթութիւնների համար են աւստրիացիք շնորհակալութիւն յայտնում Ամենաբարձրեալին, գուցէ Գալիցիայի կամ Բուկովինայի համար, կամ գուցէ Սերբիային ճողոպրելու համար։

ՍԻԼՄԱ.—Կարիավարա ցեղի պարագլուխները Գէօրգ Թագաւորին մատուցին 10,000 ֆունտ ստէրլինգ՝ պատերազմի ծախսերի համար։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Աւստրիական զանազան քաղաքներ, ի թիւս որոց Պրագը, հրաժարվել են ընդունել փախստականներին Գալիցիայից և Բուկովինայից ուտելիքի պակասութեան պատճառով։ Վիէննայում փողոցներում աղքատ ազգաբնակութեան համար եփվում և բաժանվում է գետնախնձոր։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

6—7 ապրիլի

ԹԱՒՐԻԶ.— Վերջին ժամանակներս քաղաքում երևացել են չարամիտ ագիտատորներ, որոնք ջանում են առաջ բերել հակառուսական անկարգութիւններ և փակել տալ բազարները։ Վալիահդի կարգադրութեամբ ագիտատորները կալանաւորվեցին։

Քաղաքում փակցված է իշխանութեան յայտարարութիւնը, թէ խստագոյն միջոցներ ձեռք կառնվեն կարգ ու կանոնը խախտողների և քաղաքական պրոպագանդայի դէմ։

Բազարները բացվեցին։ Քաղաքում հանգիստ է։

ԹԵՀՐԱՆ.— Թիւրքերի շարժումը դէպի Քիրմանշահ շարունակւում է հանդիպել Քիրմանշահի նահանգապետ էմիր Մօֆֆահամի դիմադրութեանը, որ բաւականին խոշոր ուժերով գրաւել է Կերինէջ լեռնանցքը Բիրջահի և Սէրպօլի կէս ճանապարհի վրա։ Վերջինս գրաւված է թիւրքերից։

ՍՊԱՀԱՆ.— Թիւրքերը Քիրմանշահ մտան գերմանական և աւստրիական դեսպանների հետ։ Սպահանի գեներալ-նահանգապետը դրութեան լրջութեան պատճառով մեկնել է որսի։ Ժանդարմէրիան հրաման ստացաւ ընդառաջել Սպահան եկող գերմանական գործակալներին։

ԹԵՀՐԱՆ.—Ռուսաց դեսպանը մեկնեց Թեհրանից արձակուրդով։ Շահը շնորհեց նրան Տիմսալ շքանշանը և ադամանդազարդ իր պատկերը կրծքին կախելու։ Թեհրանի միսիայի կառավարութիւնը յանձնեց Լոնդոնի դեսպանատան խորհրդատու Եղտէբին, որ կոչվում է արտակարգ դեսպան և լիազօր մինիստր։ Եղտէբը Թեհրան կը հասնէ մի քանի օրից յետոյ։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռուսաց կառավարութիւնը նախագծել է հրաւիրել Պետական Խորհրդի և Դումայի անդամներին տնտեսական ու ֆինանսական հարցերի քննութեանը մասնակցելու։

◆ Այն տեղեկութիւնների պատճառով, թէ Ռուսաստանի դէմ կռւող պետութիւնների շատ հպատակներ գաղտնի մասնակցում են զանազան ռուսական ձեռնարկութիւնների մէջ, Պետրոգրադից գաւառներն են ուղարկվում քննիչներ բանկային և արդիւնաբերական ձեռնարկութիւնների գործունէութիւնը ստուգելու համար։

◆ Սերբ-իտալական համաձայնութեան տեղեկութիւնը տակաւին չէ ճշտվում։

◆ Անգլիական կառավարութիւնը մտադիր է գարեջրի գործը իր ձեռքում կենտրոնացնել։

◆ Իտալական սահմանագլխում կենտրոնացած աւստրիական զօրքերը ուղարկվում են Կարպատները, իսկ նրանց փոխարէն ուղարկվում են չեխական և գալիցիական զօրքեր։

◆ Շուտով կազմակերպվում է «Պօստի, հեռագրի և հեռախօսի օր» Ռուսաստանի զանազան քաղաքներում։

◆ Համառուսական քաղաքների միութեան գլխաւոր կօմիտէտում՝ Չէլնօկովի նախագահութեամբ, քաղաքների 40 ներկայացուցիչների մասնակցութեամբ, քննվեց վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելու հարցը։ Պարզվեց, որ երկու միութիւնները չունեն հարկաւոր քանակութեամբ միջոցներ։ Որոշվեց լիազօրել Չէլնօկովին պարզել Կայսրին երկրի դրութիւնը և թոյլտուութիւն խնդրել իրաւունք տալու քաղաքային միութեանը մասնակցել վարակիչ հիւանդութիւնների դէմ մաքառելու գործին, ինչպիսի իրաւունք տրված է զէմստվօյին միութեանը։

◆ Գերմանական գլխաւոր շտաբի հաղորդագրութեան համաձայն, հարաւային Էլզասի և Լօթարինգիայի միջև ֆրանսիական աէրօպլանները 200 ռումբ նետեցին։ Մարդկային զոհերի թիւն աննշան է։ Միևնոյն գիշերը աէրօպլանները երևացին Ստրասբուրգի վրա։ Ռումբեր նետվեցին բերդերի, երկ. կամուրջների, զօրապետի շտաբի տան և էլեքտրական կայարանների վրա։

◆ Աւստրիայի և Ռումինիայի միջև հաղորդակցութիւնը խզված է, աւստրիական զօրքերի ընդարձակ տեղափոխութիւնների պատճառով։

◆ «Н. В.» ամենաստոյգ աղբիւրից տեղեկացնում է, որ Իտալիան մի նօտայով Աւստրիայից պահանջում է տէրրիտօրիալ զիջումներ։ Նօտան Վիէննայում թողել է անհաճոյ տպաւորութիւն։

◆ Մոսկվայում «հրէական օրը» տուեց 34,000 րուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՆՊԱՍՏԱՄԱՏՈՅՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Երեքշաբթի, մարտի 7-ին, ցերեկվայ ժամը 1-ին, կայացաւ Նպաստամատոյց Ընկ. վարչութեան արտակարգ նիստը, Նախագահութեամբ Ընկերութեան փոխ-նախագահ Հ. Առաքելեանի։ Քննութեան առարկայ էր առաջարկը՝ միանալ Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան կից փախստականներին գիւղատնտ. օգնութիւն հասցնելու նպատակով կազմված կօմիտէտին, տալով ներկայացուցիչներ թէ կօմիտէտի և թէ նրա գործադիր բիւրոյի մէջ։

Թեր և դէմ վիճաբանութիւններից յետոյ, վարչութիւնը 5 ձայնով ընդդէմ 1-ի որոշեց յայտնել յիշեալ կօմիտէտին հետևեալ վճիռը.

«Հայոց Նպաստամատոյց Ընկ. վարչութիւնը, քննելով փախստական-գաղթականների քայքայված տնտեսութեան վերականգնման գործը, գտաւ, ի նկատի ունենալով, որ ինքը հէնց սկզբից տուել է իր համաձայնութիւնը միանալու Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադրիչ Յանձնաժողովին և ապա գործելու համաձայն այն ծրագրի և նախահաշւի, որ կը մշակվի այդ Գլխաւոր Կօմիտէտում, ուստի Ընկերութեան վարչութիւնը կարող է համաձայնութեան մէջ մտնել Գիւղատնտեսական Ընկերութեան կօմիտէտի հետ միայն տեխնիկական խնդիրներում և տեղում՝ Ալաշկերտի և այլ շրջանում համագործակցութեան մէջ մտնելով կօմիտէտի լիազօրի և հրահանգիչների հետ»։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՐՏԱԿԱՐԳ ՆԻՍՏԸ

Երեքշաբթի, ապրիլի 7-ին, երեկ. ժամը 8-ին քաղաքային տան մէջ կայացաւ փախստականներին օգնող յանձնաժողովի արտակարգ նիստը, նախագահութեամբ Հ. Առաքելեանի, մասնակցութեամբ էկզարխատին կից կազմված թեմական կօմիտէտի նախագահ՝ սրբազան Անտօնիյ եպիսկոպոսի, բժշկական-սանիտարական վերատեսուչ դօքտոր Կ. Ստեփանեանի, նրա օգնական դօքտոր Թարխանովի և թաղային սանիտարական բժիշկների, լեհական կօմիտէտի նախագահի և յանձնաժողովի անդամների։

Բանալով նիստը, նախագահը զեկուցեց, որ Լոտկինսկայա փող. վրա Բաբա Այվազովի տանը, ուր պատսպարված են 450 ասորի փախստականներ, եղել է բծաւոր տիֆի 14 դէպք, ուստի քաղաքային բժշկական-սանիտարական վարչութիւնը որոշել է արտակարգ միջոցներ ձեռք առնել վարակման տարածումը խափանելու համար և որոշել է 1) ի նկատի ունենալով այդ տան հակառողջապահական պայմանները և խիտ բնակչութիւնը, հանել այդտեղից 247 հոգի և փոխադրել այլուր, այն է 5-րդ մասի Եվլախեան փողոցում գտնվող մի մեծ տուն, իսկ Բաբա Այվազովի տանը թողնել միայն 200 հոգի, 2) ունենալ հիւանդների մեկուսացման համար մի առանձին բնակարան, 3) հիմնել հիւանդանոց 15 մահճակալներով, 4) կազմել ընդհանուր լուացարան, 5) կազմել ընդհանուր խոհանոց, 6) ձեռք առնել մի շարք անհրաժեշտ առողջապահական միջոցներ։ Բժշկական-սանիտարական մասի կազմակերպութեան համար Քաղաքային Կենտրոնական Կօմիտէտը յատկացրել է 3000 րուբլի. Մնում է այժմ քննել, թէ մնացած ծախքերը որտեղից և ինչ միջոցներից պէտք է հոգացվեն։

Բժշկական-սանիտարական վերատեսուչ դօքտոր Ստեփանեանը մանրամասնօրէն ծանօթացրեց գործի էութեան հետ և շեշտեց անհրաժեշտութիւնը՝ ձեռք առնել կտրուկ և արտակարգ միջոցներ վարակման տարածումը խափանելու համար։

Ապա Անտօնիյ եպիսկոպոսի զեկուցումից երևաց, որ ասորի փախստականների մասին հոգացող կօմիտէտը տալիս է օրական ամեն մէկին 15 կ. և այդ կօմիտէտը կարող է այդ օգնութիւնը՝ փոխանակ իրանց տալու՝ տալ բացվելիք ճաշարանի և հիւանդանոցի համար, որովհետև օրական արվում է մօտ 200 ր. նպաստ։

Նախագահ Հ. Առաքելեան յայտնեց, որ մնացորդը կարելի է լրացնել քաղաքային յանձնաժողովի միջոցներից և առաջարկեց կազմել անմիջապէս մի ենթակօմիտէ տնտեսական և փոխադրական գործերը վարելու համար, իսկ բժշկական-սանիտարական գործերը կը վարէ բժիշկների ենթակօմիտէն։

Ընտրվեց ենթակօմիտէ բաղկացած 5 հոգուց, նախագահութեամբ քաղաքային յանձնաժողովի փոխ-նախագահ իշխ. Ի. Նակաշիձէի։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂ. ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

(Ապրիլի 6-ին)

Նիստը սկսվեց ժամը $8^{1}/_{2}$-ին Նախագահութեամբ քաղաքագլուխ Ա. Ի. Խատիսեանի։

Դուման լսեց ու վաւերացրեց նախորդ նիստի արձանագրութիւնը։

Ալէքսէյէվ-Մեսխիէվ, խօսելով երկրաչափ Վ. Մելիք-Ալլահվերդեանի ու նրա օգնական Տէր-Վարդանեանի գործի մասին, հարց է տալիս. ճի՞շդ է արդեօք լրագրական այն տեղեկութիւնը, թէ քաղաքային վարչութիւնը որոշում է կատարել այդ առիթով և համարել Մելիք-Ալլահվերդեանի արածները լոկ թերութիւններ, զանցառութիւն։

Քաղաքագլուխը, հաստատելով այդ տեղեկութեան ճշգրիտ լինելը, բացատրում է, որ վարչութիւնը իր որոշումը կայացնելիս միաժամանակ ղեկավարվել է քաղաք. կօնտրոլի և վերստուգիչ յանձնաժողովի տւեալներով, որոնք Մելիք-Ալլահվերդեանի

---

*) Ապա շուտով հրաժարեցաւ պաշտօնէն և անցաւ Եւրոպա։

րծողութիւնների մէջ գտել են ոչ թէ եղծումներ, այլ զանցառութիւն։ Ինքը Տէր-արղանեանը, որ մեղադրւում էր զեղծում-երի մէջ, յետոյ արդէն մեղմացրեց քրէա-ն բնոյթ կրող իր մեղադրանքները՝ համա-ելով զեղծումներ։

Ալէքսէյեվ-Մեսխիէվ ասում է առար-ել, որ Մելիք-Ալլահվերդեանի արարքները ի կարելի համարել թեթեւութիւն, զանցա-ութիւն։ Նա պլան է ծախսում, փողը ստա-ում ու չի մտցնում կասսան, և երբ պա-նջում են մտցնել, արդարանում է՝ թէ ոռացել է։ Քաղաքային այդ ծառայողը րիշ արարքներ էլ ունի։ Այդպիսի ծառա-ղը չը պէտք է լինի քաղաքային պաշտօ-ում՝ նրա կարծիքով։ Եւ խնդրում է իր օսքերը մտցնել արձանագրութեան մէջ։ լրացումն իր ասածների իրաւասուն խօս-անում է ներկայացնել գրաւոր յայտարա-ութիւն փաստերով հիմնաւորված։

Վերստուգիչ յանձնաժողովի անդամ ամամշեան վկայում է, որ Մելիք-Ալլահ-երդեանին ուղղված մեղադրանքները հիմ-աւոր չեն. Նրա արածները զեղծումներ չեն աւելին։

Ա. Բաբօվն էլ միանում է Ալէքսէյեվ-եսխիէվի ասածներին։

Ռ. Յովհաննիսեան նկատում է, որ սրա-ից մի քանի ժամանակ առաջ հրապարա-կան մեղադրանք ուղղեց ծառայողներից էկի—Միրվելովի դէմ իրաւասու Անտօնօվ։ յժմ էլ անում է Ալէքսէյեվ-Մեսխիէվ՝ մի ւրջ և մասնագէտ փաստաբան իրաւասու, րը շատ լաւ պիտի իմանար, որ այդպիսի րապարակական մեղադրանքի համար քրէա-ն պատասխանատուութիւն կայ. ուստի ն հարկաւոր է դեռ պարզել խնդիրը ու պա յայտարարել։ «Եւ նրան միանում է աբօվը. բայց ավ-ավ՝ Բաբօվը, գոնէ, չը էտք է ասի, որովհետեւ Մելիք-Ալլահվեր-եանի հետ ունեն դատարանում ինչ-որ րծ։ Կարծեմ մէկն ու մէկը միւսին մեղա-րում էջ։ Իրաւասուն ցաւ է յայտնում, որ արչութեան ու վերստուգիչ յանձնաժո-վի որոշումները՝ դեռ ևս չը ստորագրված՝ րեում են մամուլի էջերում։

Ալէքսէյեվ-Մեսխիէվ պատասխանում է, ր իր ասածներին նա, որպէս իրաւասու և րպէս իրաւաբան, վերաբերվում է միան-ամայն գիտակցօրէն։ Այն, ինչ որ վարչու-իւնը անուանում է թեթեւութիւն, զանցա-ութիւն, ճառախօսը անուանում է զեղ-ումն և խնդրում է այդպէս էլ մտցնել րձանագրութեան մէջ։ Ինչ վերաբերում է ելիք-Ալլահվերդեանին, նա կարող է իրան ատասխանատուութեան ենթարկել, եթէ ու-ում է։

Կօբուլաշվիլի հարցապնդում է անում աւօկզալեան անբաւարար լուսաւորութեան րա։ Նոյն հարցապնդումը անում է Ս. ալատեան Հալաբարի ֆիրմայի մասին։

Վարչութեան անդամ Գ. Ժուրուլի տուած ացատրութիւններից պարզվեց, որ էլեկ-րական լամպօչկաները գողանում են շա-ունակ և քաղաքը հնարաւորութիւն չունի յդ բանի դէմ կռիւ մղելու։

Դուման անցնում է օրակարգի խնդիր-ներին։

Քաղաքագլուխը կարդաց ի գիտութիւն ումայի իշխանուհի Գելովանիի նամակը և իշխանուհի Կոբուլովայի հեռագիրը, որով նորհակալութիւն են յայտնում դումայի րտայայտած ցաւակցութիւնների համար։

Յայտարարվում է նաև պատերազմաբեմի օֆիցէրների շնորհակալութիւնը։

Այնուհետեւ նախագահը տալիս է տեղե-կութիւն սուր-վարակիչ հիւանդութիւնների մասին, ցաւ յայտնելով, որ վերջին օրերս մի փոքր բռնկումն է նկատվում Բաբայեվի տանը տեղաւորված գաղթականների մէջ։ Վճռված է գաղթականներին փոխադրել ու-րիշ տեղ, տունը փակել և խիստ միջոցներ ձեռք առնել, որով յոյս ունի կանգնեցնել բռնկումը։

Քաղաքագլուխը տեղեկութիւն է տալիս, որ քաղաքային դրամական պահանջների մի մասը կառավարութիւնը վճարել է բաւարա-րել։ Մնում է մօբիլիզացիայինը։

Վերջում քննվում է մսի և հացի սակա-գնի խնդիրը։

Տնտեսական յանձնաժողովը անհրաժեշտ է գտել աւելացնել հացի գինը 1/4 կոպէկով, իսկ մսինը՝ մէկ կոպէկով։

Քաղաքային վարչութեան կողմից վար-չութեան անդամ Մ. Ա. Զաքար առաջար-կում է դումային աւելացնել միայն մսինը՝ ֆունտին 1 կոպէկ։

Այդ խնդրի շուրջը տաք վիճաբանութիւն է ծագում։

Ճառախօսներից մէկը՝ Բաբօվ գտնում է, որ դրա համար չը կան լուրջ պատճառաբանված հիմունքներ ոչ տնտեսական յանձնաժողովի և ոչ էլ վարչութեան կողմից, թէ ինչու պէտք է աւելացնել սակագինը։ Ուրիշները ուղղակի բացարձակօրէն յայտնում էին, որ մսի տեսակների բաժանելը պէտք է վերացնել, իսկ ոմանք խօսում են մունիցիպալիզացիայի մասին։

Մ. Ա. Զաքարը արդարացի կերպով ապացուցեց վարչութեան առաջարկի հիմնաւորված լինելը։

Դուման ձայների մեծամասնութեամբ ի վերջոյ ընդունում է վարչութեան առաջարկը՝ մսի գինը աւելացնել մէկ կոպէկով։

Թանգութեան դէմ մաքառելու հարցը թողնվում է յաջորդ նիստին, որովհետեւ իրաւասուները հակառակ քաղաքագլխի յորդորնելին համարում են ուշ։

Վերջում տեղի են ունենում ընտրութիւններ պարտադիր որոշումների մասնաժողովի անդամ հանգուցեալ Տօփճէի փոխարէն նորը ընտրելու համար։

Քուէարկութեան է դրվում նաև գոյքերի գնահատիչ մասնաժողովի երկու անդամների՝ Ս. Գալստեանի և Մինէյեվի ճանապարհածախսը աւելացնելու հարցը, որի համար կար երկու առաջարկ—20 ր. և 10 րուբլի։ Քուէարկութեամբ ընդունվում է 10 րուբլին։ Այդպիսով նրանք փոխանակ ամսական 20 ր. ստանալու՝ կը ստանան 30 ր. միայն, մի վարձատրութիւն, որ շատ չնչին է կատարվող աշխատանքի ու ստացվող օգուտի համեմատութեամբ, ինչպէս այդ արդարացիօրէն նկատեց վարչութեան անդամ Ժուրուլի։

Դ.

ՊԵՏՐՕԳՐԱԴԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Պետրօգրադ, 30 մարտի

«Կոմս Իվան Իվանօվիչ Տօլստոյ, քաղաքագլուխ և պատուաւոր նախագահ Թիւրքիայի հետ պատերազմից վնասված հայերին նպաստող Պետրօգրադի Քաղաքային Կոմիտէի, իր խորին յարգանքը յայտնելով պատիւ ունի խնդրել ձեզ, որ շնորհ բերէք կիրակի մարտի 29-ի երեկոյեան ժամը 9-ին Կոմիտէի նիստին, որի զբաղման առարկաներն են՝ 1) Կարգադրիչ Մասնաժողովի զեկուցումը, 2) Հաւաքված նուէրների բաշխման եղանակը, և 3) Ընթացիկ հարցեր»։

Այս հրաւիրագրի համաձայն Քաղաքային Կոմիտէի հայ և այլազգի անդամները ժողովվել էին երէկ երեկոյ քաղաքային դումայի դահլիճում։ Նիստը բացաւ նախագահ կոմս Տօլստոյ այն յայտարարութեամբ, թէ Քաղաքային Կոմիտէի կողմից ընտրված Կարգադրիչ Մասնաժողովը, որ կազմակերպել էր երեքօրեայ հանգանակութիւնը, վերջացրած լինելով իր գործունէութիւնը՝ պիտի ներկայացնէր այժմ իր հաշուետուութիւնը։ Նախ քան հաշիւներին անցնելը նախագահը հարկ համարեց ծանօթացնել Կոմիտէի անդամներին այն գրութիւնների հետ, որոնք ստացվել էին իր անունով զանազան տեղերից։ Եւ նրա թելադրութեամբ քարտուղարը կարդաց.

1) Մի ջերմ և ընդարձակ նամակ Պարիզի հայերից (ստորագրութիւն՝ նախագահ Սրվանձեան, քարտուղար Ա. Չօպանեան) ֆրանսերէն լեզուով, որտեղ նրանք սրտագին շնորհակալութիւն էին յայտնում Պետրօգրադ մայրաքաղաքին և նրա քաղաքային վարչութեանը յանձին կոմս Տօլստոյի, այն մարդասիրական աջակցութեան համար, որ սրանք ցոյց էին տալիս պատերազմի աղէտներից դառնապէս տանջվող իրանց բիւրաւոր հայրենակիցներին, և այս առիթով Պարիզի հայերը շեշտում էին այն անկեղծ բարոյական կապի վրա, որ զօդում էր հայութիւնը Մեծ Ռուսաստանի հետ։

Նոյնպիսի զգացմունքով էին տոգորված նաև հետեւեալ հեռագիրներն ուղարկողները.

2) Թիֆլիսից, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանից.

3) Բագուից, որի տակ ստորագրել էին Կարապետ եպ., բժ. Զաքարեան, Հ. Տէր-Միքայէլեան, Ստ. Թագիանոսեան, Ա. Վաչեան, Ա. Պարոնեան, Տ. Բէգզադեան, Ծովեանեան և Քր. Վերմիշեան, իւրաքանչիւրն իր հասարակական դիրքը յիշելով.

4) Ղարաբաղի թեմի առաջնորդ Զաւէն վարդապետից.

5) Շուշու հայ վարժուհիներից և ուսուցիչներից.

6) Նոր-Նախիջեւանից, և

7) Եալթայից։

Այս հեռագիրները նպաստաւոր տպաւորութիւն թողին Կոմիտէի անդամների վրա։

Այնուհետեւ Կոմիտէի վերստուգիչ յանձնաժողովի կողմից գեն.-լէյտ. Բահրամեան կարդաց զեկուցում, որով հաստատում էր բոլոր հաշիւների ճշտութիւնը։ Բուն հաշիւը կարդաց գանձապահը՝ Յովս. Ղուկասեան։

Այս հաշուից երեւաց, որ ընդամենը Կոմիտէն հանգանակել է 1) Պ. Օ. Ղուկասեանի միջոցով տեղիս զանազան ռուսական բանկերից 15,000 ր., 2) այլ և այլ շրջաններում, մասնաւոր անհատներից և հաստատութիւններից՝ 35,000 ր., 3) փողոցներում հանգանակութեան տուփերով մանր դրամ 33,000 ր., գումար՝ 83,000 ր., զանազան ծախք եղել է 3000 ր., զուտ արդիւնք 80,000 ր.։

Այս հասոյթը շատ աջող պէտք է համարել, որովհետեւ վերջին ժամանակներն այնքան յաճախակի կատարված ժողովարարութիւններից շատ քիչն այսչափ գումարի են հասած այստեղ։

Բացի դրամական հասոյթից՝ մեծ քանակութեամբ իրեղէններ են նուիրված նոյն նպատակով, որոնք կարգի բերելով մի քանի վագօններով պիտի ուղարկվեն Կովկաս։

Հաշիւը լսվեց ծափահարութեամբ։

Նախագահը ժողովի քննութեանն առաջարկեց հետեւեալ հարցը, թէ ինչ ճանապարհով բաժանել հաւաքված գումարները, ո՞ւմ ուղարկել և միանգամից թէ մաս առ մաս։

Միաձայն որոշվեց. ամբողջ գումարը փոխադրել այն Կենտրոնական Կոմիտէին, որ վերջերս կազմվեց Էջմիածնում, Կաթողիկոսի հովանաւորութեան տակ, որպէս զի նրա հսկողութեան ներքեւ բաշխվի մաս առ մաս «Թիւրքիայի հետ մղվող պատերազմից վնասված հայերին անխտիր»։ Վերոյիշեալ 80,000 րուբլու հետ միասին որոշվեց Էջմիածին փոխադրել նաև Պետրօգրադի քաղ. դումայի նուիրած 50,000 րուբլին։ Այս վերջին գումարից 3000 ր. արդէն փոխադրված է Ախալքալաք. Կ. Հ. Բ. Ընկ. տեղական ճիւղին, որ հեռագրով դիմել էր Պետրօգրադի քաղ. վարչութեանը և նպաստ էր խնդրել Արդանուշից և Արդահանից այնտեղ հասնող կարօտեալների համար։

Հաշուետուութեան խնդիրը կարգադրելուց յետոյ, ժողովականները խնդրեցին, որ այս Քաղաքային Կոմիտէն չը կազմալուծվի, այլ շարունակէ մնալ, որովհետեւ կարող են դեռ ևս նոր նուէրներ ստացվել քաղ. վարչութեան մէջ, ինչպէս որ իրօք դեռ ստացվում է, և կոմս Տօլստոյ նոյնպէս մնայ նրա պատուաւոր նախագահը։ Պատուական քաղաքագլուխը սիրով համաձայնեց թէ մէկին և թէ միւսին։ Ուստի երբ այս հաշիւը տպվի տեղական լրագիրներում, այդ մասին ևս պիտի յիշատակվի։

Գալով ռուս-հայկական միութեան մեդալներին, որոնք պիտի կոչվեն այն արձանագրութեամբ, որ ես հաղորդած եմ արդէն, և պիտի լինեն 3 տեսակ. այն է արծաթէ՝ գին 3 ր., բրօնզէ՝ գին 1 ր. և պղնձէ՝ 50 կ.։ Քանակութիւնը չորոշվեց, որովհետեւ պիտի պատրաստվեն հետզհետէ՝ որչափ որ պահանջվեն։ Տասն օրից դրանք արդէն պատրաստ կը լինեն և պիտի ծախվեն քաղաքային վարչութեան մէջ այնպէս, ինչպէս ծախվում են այնտեղ ռուս-լեհական մեդալները։ Արդէն պահանջում են այդ մեդալներից նոյնիսկ արտասահմանի հայութիւնից, որն առհասարակ բաւական հետաքրքրվել է Պետրօգրադի այս հայանպաստ շարժումով, և, ինչպէս երեւում էր այդ՝ Չօպանեանի վերոյիշեալ նամակից, մանրամասն հետեւել են այստեղ կատարվածին, որովհետեւ խնդրել էին կոմս Տօլստոյից, որ բարեհաճի ուղարկել նրանց մի-մի օրինակ ակադեմիկոս Մառրի և պրոֆ. Ռօստովցեվի կազմած կոչերից, որոնց մասին ես գրել էի «Մշակում»։ Թէեւ պ. Մառրի կոչը՝ շատ հմտալից ինքն ըստ ինքեան, բայց իր ընդարձակութեան պատճառով լոյս չը տեսաւ լրագիրներում առանձին։

Օրակարգի խնդիրները վերջացնելուց յետոյ՝ ժողովը բուռն ծափահարութեամբ իր խորին շնորհակալութիւնը յայտնեց այն տիկիններին և պարոններին, որոնք անձամբ և այնքան եռանդով ու անձնանուիրութեամբ աշխատել էին անդուլ և անդադար, այս 3-օրեայ ժողովարարութեան համար։

Կոմիտէի հայ անդամների կողմից Մ. Աջէմեան մի գեղեցիկ ճառով շնորհակալութիւն յայտնեց ի դիմաց այն հազարաւոր թշուառ հայերի, որոնք անողոք թշնամու գազանութիւններից ապաւինել էին Մեծ-Ռուսաստանի հովանու տակ և պիտի օգտվէին այժմ Պետրօգրադի քաղաքի և ազգաբնակութեան այս առատաձեռն նուիրատուութիւնից, որի գումարն սպասածից շատ աւելի էր։ Նա նոյնպէս առանձնապէս շեշտեց խնդրի բարոյական կողմի վրա, որի արդիւնքն անհամեմատ աւելի մեծ էր և կարեւոր թէ ներկայի և թէ ապագայի տեսակէտից։

Նրան պատասխանեց կոմս Տօլստոյ իր սովորական պարզ ու անկեղծ ձեւով պատշաճաւոր խօսքերով և վերջացրեց հետեւեալ նշանակալից բարեմաղթութեամբ. «Ցանկանում եմ ի սրտէ, որ հայ կուլտուրական ազգը կանգնի իր սեփական ոտքերի վրա և հասնի այն դրութեան, որ կարողանայ իր ոյժերով առաջ գնալ քաղաքակրթութեան շաւղի մէջ...»։

Բուռն ծափահարութիւններով ընդունվեց ազնիւ կոմսի այս սրտագին մաղթանքը։

Սարուխան

ՄՏՔԵՐ ՈՒ ԽՈՀԵՐ

II

Թատրոնական գործը նախանցեալ թատերաշրջանի վերջանալուց յետոյ առաջացրեց մեծ ոգեւորութիւն Թիֆլիսում, գաւառներում ու մինչև իսկ շատ հեռաւոր վայրերում՝ Պոլսում։

Այդ բանում ամենամեծ դերը կատարել և կատարում է Դրամատիկական Ընկերութիւնը, որը պարբերաբար՝ տարէ-տարի կազմում է դերասանական խումբ Թիֆլիսում և միշտ վառ է պահում մայրենի բեմի ճրագը։ Նաև նպաստեց հասարակութեան ոգեւորութեան այն հանգամանքը, որ այդ թատերաշրջանին երկրորդ փորձն եղաւ՝ երկար տարիներից յետոյ հրաւիրվեց Թիւրքահայ երիտասարդ դերասան Վահրամ Փափազեանը, որը մեզ մօտ անյայտ էր, սակայն Թիւրքիայում, Եգիպտոսում, Բօլգարիայում յայտնի էր՝ իբրեւ ապագայ ունեցող շնորհալի դերասան։ Դրամատիկական Ընկերութեան նախաձեռնութեամբ հրաւիրված դերասան Վահրամ Փափազեանը միանգամայն արդարացրեց իր վրա դրված յոյսերը։

Հասարակութիւնը տեսաւ Վահրամ Փափազեանի խաղը և համոզվեց, որ չը նայած Թիւրքահայերի գլխին եկած մի շարք զուլումներին, այնուամենայնիւ չէ մարել և Թիւրքահայերի մէջ գեղարուեստական շնորհքի, տաղանդի կայծը։ Միայն թէ պէտք է հնարաւորութիւն տալ այդ նորաբողբոջ տաղանդներին՝ ծաղկելու մայրենի բեմի վրա։

Անցեալ տարվայ մայիս ամսից արդէն դերասանները ապրում էին մի առանձին ոգեւորութեամբ։ Նրանց արժէքը՝ կուրսը շատ էր բարձրացել դերասանական բորսայի վրա։ Բագուի համար խումբ է կազմվում, մի խումբ Թիֆլիսի համար։ Պոլիսը նոյնպէս լիազօրել էր մի դերասանուհու՝ կազմել խումբ. կազմակերպվում էր նաև շրջիկ խումբ։ Մի խօսքով՝ դերասանը իրան շատ երջանիկ էր զգում և շատ բարձր գնահատում իր աշխատանքը։ Չէ որ նրան հրաւիրում է Բագուն, Թիֆլիսը, Պոլիսը, գաւառական շրջիկ խումբ կազմակերպողները և այլն։ Եւ ահա սկսվեց Թիֆլիսում դերասանական բորսայի այսպէս ասած վակխանալիան։ Ամեն մի դերասան օգտվեց այս դրութիւնից, որ, ինչպէս չար լեզուներն են ասում, իրանք արհեստականապէս ստեղծեցին, շատ ճարպիկօրէն։ Վազում են այստեղ-այնտեղ, ամեն մէկը շտապեցնում է շուտ պայմանագիրը կապել, որ թէպէտ իրան հրաւիրում են ամսական այսքան հարիւրներով, սակայն ինքը շնորհ է անում, ուզում է միայն Թիֆլիս մի քանի հարիւրով։ Բայց իսկական գնահատութիւնը ամեն մէկ այդպէս ասողի շատ ու շատ համեստ գումար է եղել, որպիսին և ստացել են ծառայելիս։ Վերջ ի վերջոյ, միայն Բագուն և Թիֆլիսը դերասանական խմբեր կազմակերպեցին։ Ողջունելի է Բագուի հայ գործիչների ձեռնարկութիւնը՝ ունենալ Բագւում ևս մայրենի բեմ։ Սակայն կազմակերպութեան գործի մէջ շատ անփորձ գտնվեցին, լսեցին և նշանակութիւն տուին դերասանների ագահօրէն ծրագիրներին և մեծամեծ խոստումներին։ Սկսեցին գործը և վերջում չարաչար տուժեցին, ունեցան խոշոր բաց, ինչպէս ասում են՝ մօտ 8000։ Բագուի թատրոնական յանձնաժողովի անփորձութիւնն ու սխալանքները անցեալ թատերաշրջանի ձեռնարկութեան մէջ անդրադարձան նաև Թիֆլիսի թատրոնական գործի վրա։ Դրամատիկական Ընկերութիւնը նոյնպէս ունեցաւ խոշոր բաց՝ վեց հազարից աւելի։ Ինչու, որովհետեւ Բագուն և Թիֆլիսը անկախաբար էին գործում՝ առանց փոխադարձ համաձայնութեան։

Դերասաններն ևս շատ լաւ օգտվեցին այդ հանգամանքից։ Ինչպէս յայտնի է, թատրոնական գործի մէջ ամենախոշոր տեղը գրաւում է դերասանական խմբի ռոճիկների գումարը։ Նախահաշուով որոշված գումարի ամենախոշոր մասը՝ գրեթէ երեք քառորդը՝ կլանում են դերասանների ռոճիկները։ Այդ դեռ քիչ է։ Ի՛նչ տեսակ առատ ռոճիկների հաշուով գումար էլ որոշէք նախահաշուի մէջ, դերասանները վարձելիս որոշած գումարը բարձրանում է մի քանի, երբեմն 5—6 հազարով։ Ամեն մի դերասան, նախահաշուի գումարին նայելով, իրան կրկնակի, եռակի է գնահատում... Վերջ ի վերջոյ գալիս էք մի որեւէ համաձայնութեան. ուրախութեամբ ստորագրում է պայմանագիրը, ուր ասված է, թէ ամեն դեր պէտք է կատարէ, և յետոյ չարաչար խախտում է այդ կէտը. պատրաստ է ամեն տեսակ պայմանագիր՝ մինչև իսկ հարիւր հազարական տուգանքներով ստորագրել, ինքը ոչինչով չէ տուժում, քանի որ պայման կապողները երկու անհաւասար կողմեր են՝ դերասան և ընկերութիւն։ Դերասանը խախտեց պայմանագիրը, ի՞նչ կարող էք նրանից ստանալ. իսկ վայն եկաւ, եթէ Ընկերութիւնը խախտէ պայմանագիրը դերասանների...

Ապա այս ի նկատի ունենալով, ցանկալի է առաջիկայում Բագւում խումբ կազմելիս Բագուի թատրոնական գործի ղեկավարները համաձայնութեան գան Թիֆլիսում գործող Դրամատիկական Ընկերութեան հետ և փոխադարձ համաձայնութեամբ ու վստահութեամբ դերասանական խմբեր կազմեն և գործեն։ Հակառակ դէպքում վերեւում յիշված երեւոյթներն են կրկնվելու, որից չարաչար տուժում է հայ թատրոնը և՛ դրամական, և՛ գեղարուեստական և նիւթական կողմից։

Կոլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Մոսկվայի՝ յօգուտ փախստականների նուիրաբերված 30,000 ր. համառուսական զեմստվային միութեան Անդրկովկասի կոմիտէն բաժանելու է միութեան գործունէութեան շրջաններում՝ Կարսում, Օլթիում, Իգդիրում և Բաթումում։ Փախստականներին օգնութիւն ցոյց տալու կէտը պէտք է որոշեն շրջանային լիազօրները։ Պարսկաստանի ուղղութեամբ այդ աշխատանքը իր վրա է վերցրել պատգամաւոր Պապաջանեան, որ արդէն մեկնել է Ջուլֆա և Թաւրիզ։ Կոմիտէն Արդուինում բացում է լազարէթ։ Համառուսական քաղաքների միութեան և Սիբիրի շրջանային կոմիտէի լիազօր պրիվատ-դոցենտ Կալաչեվ շրջելով միութեան գործունէութեան շրջանը՝ բժշկա-սանիտարական խմբերի աշխատանքի հետ ծանօթանալու նպատակով, եկել է այն եզրակացութեան, որ ցանկալի է համերաշխ աշխատանք Կովկասի քաղաքների միութեան և Սիբիրի կոմիտէի միջև՝ թեթեւ տեյի կէտեր հիմնելու վերաբերմամբ։ Կոմիտէն ունի 400,000 րուբլի։

◆ Ինչպէս յայտնում են, փոխարքայի խորհրդի անդամ եգերմէյստէր Ն. Ֆ. Զունկօվսկի ուղարկվում է Գալիցիայի կառավարչութեան ֆինանսական ծրագիր կազմելու համար։

◆ Երեքշաբթի օրը, ամսիս 7-ին, կայացաւ Թիֆլիսի ուղղափառ հոգեւոր սեմինարիայում հիւանդանոցի օծումը։ Հիւանդանոցը հիւանդ և վիրաւոր զօրականների համար է և հիմնված է յանուն Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի։

◆ Ուրբաթ, ամսիս 10-ին, կազմվում է միօրեայ հանգանակութիւն յօգուտ պատերազմից վնասված լեհերի։ Այդ օրը լոյս է տեսնելու «Նոր օր» անունով ռուսերէն և հայերէն մի թերթ, որի վաճառքից ստացված եկամուտը յատկացվելու է նոյն նպատակին։

◆ Կովկասի քաղաքների միութիւնը հայ փախստականների տնտեսութիւնները վերականգնելու համար հայկական կոմիտէին յանձնել է 6000 րուբլի։

◆ Վիրաւորներին վերաբերեալ քաղ. գործադիր յանձնաժողովը դիմել է Կովկասի քաղաքների միութեան, խնդրելով 75,000 ր. յատկացնել հիւանդանոցների և լազարէթների պահպանութեան համար։

◆ Այսօր Արտիստական Թատրոնում կայանալու է ռուս դրամատիկ խմբի ներկայացումը («Օթէլլօ» ողբերգութիւնը) մասնակցութեամբ հայ դերասան Վահրամ Փափազեանի։ Օթէլլօյի դերը հայերէն կը կատարէ Վ. Փափազեանը։ Շուտով մի յօդուած կը տանք, ուր լրագրական քաղուածքներից, վերցված՝ ֆրանսիական, յունական և բօլգարական թերթերից, ցոյց կը տրվի թէ որպիսի աջողութիւն է ունեցել երիտասարդ դերասան Փափազեանը Թիւրքիայի, Եգիպտոսի և Բօլգարիայի նշանաւոր քաղաքներում հայերէն կամ ֆրանսերէն տրագիկ դերեր կատարելիս այլազգի դերասանական խմբերի հետ։

◆ Թիւրքերի գերի վարած 15 արդուինցիներից ստացվել է մի նամակ, Էրսիզից (Օլթիի այն կողմը), որով նրանք հաղորդում են, որ իրանք կենդանի են։ Թիֆլիսում բնակվող մի խումբ արդուինցիներ դիմեցին իտալական տեղիս հիւպատոս պ. Վալերիին, խնդրելով որ իտալական կառավարութեան Թիւրքիայում եղած ներկայացուցիչները արդուինցիներին առնեն իրանց հովանաւորութեան ներքոյ։ Պ. Վալերին արդուինցիների խնդրին վերաբերվեց խիստ համակրանքով և խոստացաւ անմիջապէս հաղորդել այդ մասին իտալական արտաքին գործերի մինիստրութեան։

◆ Դադարեցված «Закавказская Рѣчь» և «Голосъ Кавказа» թերթերին թոյլատրված է վերսկսել իրանց հրատարակութիւնը։

◆ Բծաւոր տիֆով վարակվել և Արամեանցի հիւանդանոցում պառկած է «Գաւառի Ձայն» թերթի խմբագիր Յովս. Միրզոյեան։

◆ Թիֆլիսում հեռագիր է ստացվել Իգդիրից, որ փախստական տղամարդիկ վերադառնում են Ալաշկերտի հովիտը։

◆ Շաբաթ, ապրիլի 11-ին, Հասարակական ակումբում (Գրիբօէդօվսկայա № 22) տեղական մանկավարժներ Վ. Ի. Շամօվ և Ն. Վ. Վօլկօվ կը կարդան ռեֆերատներ՝ առաջինը «Зарубежная Русь» և երկրորդը՝ «Современная русская поэзія о вайнѣ» նիւթերի մասին։

◆ Ստացանք Մոսկվայի հայկական կոմիտէի գործունէութեան համառօտ հաշիւը, որը վերաբերում է 1914 թ. հոկտ. 26-ից մինչև 1915 թ. փետր. 1-ի ժամանակաշրջանին։ Այդ ժամանակամիջոցին կոմիտէտը մուտք ունեցել է 111,148 ր., որից ծախսել է 71,628 ր.։ Այժմ մնում է 39,520 ր. 66 կոպէկ։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Сборникъ Дипломатическихъ Документовъ. Реформы въ Арменіи. 26 ноября 1912 г.—10 мая 1914 года. Изд. Министерства Иностр. Дѣлъ Петроградъ, 1915 г.

Ժողովածու Դիպլօմատիկան Դօկումէնտների։ Ռէֆօրմները Հայաստանում։ 26 նոյեմբեր 1912 թ. սկսեալ ցի 10 մայիս 1914 թ.։ Հրատար. արտաքին գործերի մինիստրութեան)։

XXVII

Նարնջագոյն Գրքի 136-րդ դօկումէնտը Գուլկէվիչի հեռագիրն է Սազօնօվին յանուարի 16-ին, որով յայտնում է, թէ Բ. Դուռը եթէ չը ստանայ պատասխան իր վերջին առաջարկութիւններին, տրված կայսերական կառավարութեան, դիմելու է մեծ պետութիւնների միջնորդութեանը և առաջարկելու է նրանց լուծել հետևեալ երկու հարցը. 1) արդեօք ընտրութիւնների համեմատական սիստեմը հանդիսանում է ամենաշատ համապատասխանողը անաչառութեան պահանջին. 2) արդեօք կարելի է հաւատ ընծայել հայերի կազմած ցուցակներին։ Գուլկեվիչը երկիւղ է կրում, որ խնդիրների այդպիսի ձևակերպման ժամանակ լուծումը չի լինի յօգուտ մեր, մանաւանդ որ ենթադրեալ քայլի ներշնչողը մեծ պետութիւնների ներկայացուցիչներից մինն է։

137-րդ դօկումենտը՝ Գուլկեվիչի հեռագիրն է Սազօնովին, յունվարի 16-ից, որով յայտնում է, թէ մինիստրի պնդումները ազդեցութիւն են գործել մեծ վեզիրի վրա, որ հրաւիրել է նրան իր մօտ և վերջ ի վերջոյ մինիստրների խորհրդի կողմից ընդունվել է հետևեալ կոմպրոմիսը.

«Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիրի վիլայէթներում ընդհանուր խորհուրդների անդամները հէնց այժմ պէտք է ընտրվեն համեմատական սկզբունքի հիման վրա։ Այն է՝ մինչև ցուցակագրութիւնը մուսուլման ընտրողների թիւը պէտք է որոշվի ցուցակներով, որոնց հիման վրա կատարվեցին վերջին ընտրութիւնները, իսկ ոչ-մուսուլման ընտրողների թիւը այն ցուցակներով, որ կը ներկայացնեն համայնքները։ Եթէ, սակայն, նիւթական դժուարութիւնների պատճառով, այդպիսի ժամանակաւոր ընտրական սիստեմը թւայ անիրագործելի, ընդ.-վերատեսուչները ստանում են իրաւունք Սըվազի, Խարբերդի և Դիարբեքիրի ընդհանուր խորհուրդներում բաժանման տեղերի համար առաջարկել այլ փոխ-յարաբերութիւն, առաւել համապատասխանող յիշված երեք վիլայէթի ներկայ պահանջներին և պայմաններին»։

Այս կոմպրոմիսը պէտք է համարել Բ. Դրան վերջին զիջողութիւնը, որից այն կողմը չի անցնելու։ Վերջում Գուլկեվիչ միջնորդում է մինիստրին ընդունել վերևի բանաձևը, յիշված հնարաւորութիւններից խուսափելու և հայկական ռէֆօրմների հարցի նախաձեռնութիւնը ռուսաց ձեռքում պահելու համար։

138-դը՝ Սազօնովի հեռագիրն է Գուլկեվիչին, յունվարի 17-ից, թէ ռուսահայ գործիչները Բերլինից ստացած հեռագրի համաձայն՝ սուլթանը իբր թէ խնդրել է պետութիւններին՝ մատնացոյց անել տասն թեկնածու, որոնց թւից նա կընտրի երկու ընդ.-վերատեսուչ։ Մինիստրը ասում է, որ այդ ենթադրութիւնը չէր համապատասխանի մեծ վեզիրի ռուսաց դեսպանին արած յայտարարութեան՝ «բանաւոր» կերպով պետութիւնների ներկայացուցիչներին դիմելու մասին։

139-դը՝ Գուլկեվիչի հեռագիրն է Սազօնովին, յունվարի 18-ից, թէ Բ. Դրան դիմումները պետութիւններին համաձայնեցվելու են դեսպանի 1913 թ. դեկտ. 16-ի հեռագրի հետ։ Գուլկեվիչը, ի միջի այլոց, յայտնում է, որ հայերի Բերլինից ստացած տեղեկութիւնը զուրկ է հիմքից։

(Կը շարունակվի)

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մալօրօսիական խմբի ներկայացումները

Ապրիլի 4-ից սկսած Գայդամակիի մալօրօսիական խումբը տալիս է ներկայացումներ Արքունական թատրոնում։

Խումբը, ինչպէս թւում է, բաղկացած է լաւ ույժերից, ունի գեղեցիկ կազմված երգեցիկ խումբ, համապատասխան՝ թէև սակաւամարդ՝ օրկէստր, տեխնիքապէս կատարելագործված պարողներ և ժողովրդական շքեղ հագուստեղէն ու արդուզարդեր։

Հասարակութիւնը յաճախում է սիրախնդութեամբ ու ստանում գեղարուեստական մեծ հաճոյք։

Ապրիլի 6-ին տրված «Нещасне Кохання» 5 գործող. պատկերը՝ առնված մալօրօսիական ժողովրդական կեանքից, անցաւ բաւական հարթ, թողնելով հաճելի տպաւորութիւն։

Այդ երեկոյեան մասնակցողների թւում իրանց շնորհալի խաղով աչքի ընկան և բուռն ծափահարութիւններ վաստակեցին տ. տ. Զատըրկէվիչ, Շօստակօվսկայա և պիէսի հեղինակ պ. Մանկօ։

Վերջում դրված «Вечорныци» 1 գործողութեամբ երաժշտական պատկերը նոյնպէս անցաւ բաւական աջող՝ շնորհիւ երգեցիկ խմբի և պարողների կատարած մի շարք գեղեցիկ նոմէրների։

Թատրոնում բաւականաչափ հասարակութիւն կար։

*

Նոյն խումբը ապրիլի 7-ին ներկայացրեց «Наталка Полтавка» մալօրօսիական օպերէտը և «Оце такъ поженыхалися» ժողովրդ. պատկերը։

Օպերէտի մէջ իր լիրիքական և քաղցրահնչիւն տեմբր պարունակող ձայնով խոշոր աջողութիւն ունեցաւ տ. Կօչուբէյ-Զբանօվսկայան։ Լաւ էր և պ. Գայդամակին։

Սակայն, անհրաժեշտ ենք համարում նկատել, որ օպերէտի տպաւորութիւնը աւելի քան ուժեղ կարող էր լինել, եթէ չը լինէր «տէնօր» անուանված Զարսկիի տեխնիկայից զուրկ և ականջ ծակող երգասացութիւնը, որ կատարելապէս աններդաշնակութիւն առաջ բերեց օպերէտի ձայնական-գեղարուեստական մասում։

Թատրոնը լիքը հասարակութեանը մեծ զուարճութիւն և ծիծաղ պատճառեցին վերջում դրված պատկերի մէջ մասնակցողները, որոնց թւում գլխաւորաբար աչքի էր զարնվում պ. Մանկօն՝ գիւղական սարկաւագի կոմիքական դերում. X.

Ժողովրդական Տուն

Այս անգամ Հայկ. Դրամատ. Ընկերակցութիւնը իր ույժերից չափազանց վեր մի գործ էր վերցրել, որի տակ ճնշվում էին ամենքը։ Նա ներկայացնում էր «Օթէլլօ»։

Գլխաւոր դերերը, որ կատարում էին Ամօ-Խարազեան (Օթէլօ), տիկ. Ցասմիկ (Դեզդեմօնա) և Գաւրօշ (Եագօ), բոլորն էլ թոյլ էին։ Ճիշդ է, նրանք տուին մի քանի սովորած գծեր այդ տարբերային մարդկանց հոգեկան դրութիւնից, բայց նրանց խաղը շատ հեռու էր իսկականից։

Պ. Ամօ-Խարազեանի թէ հասակը և թէ գրիմը համապատասխանում էր դերին, բայց նրա ձայնը շատ մօնօտօն էր։

Առհասարակ մօնօտօն և անկենդան էին բոլոր դերակատարները։

Թատրոնը ծայրէ ի ծայր լի էր։

Ս. Ր.

Դիւթական լարեր

Երեքշաբթի, ապրիլի 7-ին, Արտիստիկ. Ընկ. մեծ դահլիճում կայացաւ դաշնակահարուհի օր. Մարգարիտ Միրիմանեանի կօնցերտը։ Ուրիշ աշխարհում նման մի երեկոյ մի էպօխ կը համարվէր նրանց համար, որոնք իրանց մթնոլորտում ծնունդ առած բողբոջի առաջին ծաղիկը տեսնելիս զգալու ու շօշափելու կարողութիւնն ունենային։ Եւ արտիստուհի օր. Մարգարիտ Միրիմանեան՝ ապրիլի 7-ին հանդէս եկաւ Թիֆլիսի մուզիկալ աշխարհի առաջ իր մեծ փայլով։ Արտիստուհին Բէթհօվէնից, Շուբերտից, Շումանից, Շօպէնից այնքան սքանչելիօրէն, նուրբ ու յստակ նուագեց, որ լսող մասնագէտ-դաշնակահարներ մնացել էին զմայլած։ Ընտիր շկօլա, շքեղօրէն կատարելագործված արտայայտութեան արուեստ, քնքոյշ զգացմունք—ահա այն տըւեալները, որոնք ակներև գուշակել են տալիս արտիստուհուն մօտ ապագայում համաշխարհային աստղերին հասնելու։

Իսկ երաժշտականութեամբ պարծեցող Թիֆլիսը այս անգամ էլ ապացուցեց, որ նա չը գիտէ գնահատել իւրայիններին...

Եւ ծաղկեայ՝ այն մէկը միւսից սքանչելի կողովները, անհամար ծաղկեփնջերը, դափնեայ պսակը, սրտաբուխ ծափահարութիւնները պատանի դաշնակահարուհիներին ու ներկայութիւնը կօնցերտի սկզբից մինչև վերջը երաժշտագէտ-մասնագէտների թող շատ-շատ տարին եր խթան լինեն երիտասարդ արուեստագէտուհուն չը հիասթափվելու մեր ժայռ անտարբերութիւնից։

T—o

ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՅՕԳՈՒՏ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Ամեն հայու սիրտին խօսող կոչ մը

Կովկասի գաղթականներուն ի նպաստ՝ Հ. Բ. Ը. Միութեան կողմէ ձեռնարկուած մասնաւոր հանգանակութիւնը յուսացուածէն աւելի փայլուն արդիւնք մը տուած ըլլալով և միւս կողմէ՝ նկատի առնելով որ քաղաքական ներկայ իրադարձութիւնները նորանոր և աւելի կարևոր պարտականութեանց կը հրաւիրեն հայութիւնը, Միութեան կեդր. վարչ. ժողովը իր վերջին երկու նիստերուն մէջ ստիպողաբար զբաղեցաւ վայրկեանին պարտադրած հարցերովը և որոշեց նախորդ հանգանակութիւնը փակուած հռչակել, մանաւանդ որ տարաբաղդ գաղթականներուն վիճակը բարւոքելու մասին լուրջ կարգադրութիւններ եղած են արդէն շնորհիւ հայ ժողովուրդին կողմէ այս առթիւ արտայայտուած գովելի անձնուիրութեան, որքան և ռուսական կառավարութեան ցոյց տուած բարեացակամ պաշտպանութեան։

Միեւնոյն ժամանակ, վսեմ. Պօղոս Նուպար փաշա, անկախաբար Հ. Բ. Ը. Միութեան՝ ինչպէս և եգիպտահայ գաղութի նախագահի իր հանգամանքէն, գործելով իբրև լիազօր-պատուիրակ Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի, նախաձեռնարկ եղաւ նոր հանգանակութեան մը, որուն նպատակն է ազգային շահերու պաշտպանութեան գործին յատուկ կարևոր հիմնադրամ մը գոյացնել արտասահմանի մէջ, օրպէսզի կարելի ըլլայ պատերազմի տեւողութեան միջոցին արդէն իսկ անհրաժեշտ դատուած բազմադիմի պէտքերը հոգալ, ինչպէս վաղը դիւանագիտական աշխատութեանց առթիւ՝ այլապէս հարկաւոր ծախքերուն այժմէն պատրաստ գտնուիլ։

Ինչպէս յստակօրէն պարզուած է շրջաբերական-կոչին մէջ՝ զոր նորին վսեմութիւնը հրապարակ հանեց այս առթիւ, թէև այս հանգանակութիւնը պիտի կատարէ Հ. Բ. Ը. Միութեան շրջանակէն դուրս, նկատի առնելով առաջադրուած նպատակին զուտ ազգային-քաղաքական բնոյթը, որուն դժբաղդաբար տակաւին թոյլատու չէ Միութեան հիմնական կանոնագիրը, ցորքան փափաքուած բարեփոխումները ներմուծուած չեն իր նպատակին և կազմին վերաբերեալ հիմնական տրամադրութեանց մէջ, սակայն օրինական այս որոշումը չի կրնար ազդել Միութեան գործիչներուն և անդամներուն անհատական գործունէութեան վրայ, այլ՝ հարկ կը տեսնենք աւելցնել՝ ընդհակառակը պարտք կը դնէ իւրաքանչիւրին վրայ աւելի ազատօրէն նուիրուելու այս գերազանցապէս ազգաշէն ձեռնարկին, որ կոչուած է հզօրապէս ծառայելու մեր ազգային վաղեմի բաղձանքներուն վերջնական յաղթանակին։

Ժամ է որ հայութիւնն ամբողջ՝ մէկ մարմին և մէկ հոգի բոլորուի վաղուց փայփայուած և հուսկ իրականացած այս գեղեցիկ գործին շուրջ, մոռնալով հին վէճերն ու կիրքերը և միմիայն մէկ նպատակակէտ ունենալով՝ փարիլ ազգային պաշտպանութեան կենսական գործին և անոր ամեն տեսակ կարիքներուն նիւթապէս սատարելու կոչուած սոյն ընդհանուր հանգանակութեան։ Տարակոյս չկայ, թէ հայկական բարենորոգումներու համար կատարուած դիւանագիտական աշխատութեանց առթիւ ազգովին ցոյց տրուած հիանալի համերաշխութիւնը՝ աւելի դրապէս և աւելի միահամուռ պիտի արտայայտուի մանաւանդ այս անգամ։

Վսեմ. Պօղոս Նուպար փաշա գլուխ կանգնելով ազգին համար այսքան սրբազան ձեռնարկի մը, վստահ է թէ ոչ մէկ հայ պիտի մերժէ իրեն բերելու իր օգնութեան բաժինը այս բաղդորոշ րոպէին, ուր ազգին ճակատագիրը պիտի վճռուի։

Կասկած չունինք թէ նորին վսեմութեան ձայնը արձագանգ պիտի գտնէ ամեն հայու սիրտին մէջ և ազգային դատին մեծ [illegible] շուրջ սրտեռանդ պիտի բոլորուի արտասահմանի ազգասէր հայութիւնը, անխտիր և համերաշխ, մէկ կամքի, մէկ հոգիի նման, միակ բնաբան ունենալով՝ «դէպի յաղթանակ»։

Կեցցէ հայութիւնը։ («Միութիւն»)

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ԿՈՂՄՆԱԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐ.

Թիֆլիս, 8 ապրիլի

Հայ Նպաստամատոյց Ընկերութեան վարչութիւնը շնորհակալութիւն է յայտնում տ. Վ. Միլեանին, օր. Կ. Մուրադեանին, և պ. Գ. Սմբատեանին, որոնք մարտի 23-ին, մեռելոցի օրը, վաճառեցին 111 րուբլու «Ղեւոնդ Երէցը օրհնում է Վարդան Մամիկոնեանի զօրքը» պատկերից Խօջիվանքում՝ յօգուտ Ընկերութեան, փախստականների օգտին։ Վարչութիւն

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր.	ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր.	երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր.	ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր.	երեկ.
	» Ջուլֆա	10 ժ. 23 ր.	երեկ.
	» Բօրժօմ	3 ժ. 20 ր.	ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր.	ցերեկ.
№ 4	Բաթումից—	5 ժ. 55 ր.	երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր.	երեկ.
№ 10	Բաթումից—	9 ժ. 51 ր.	առաւ.
	Ջուլֆայից —	6 ժ. 53 ր.	առաւ.
	Բօրժօմից —	7 ժ. 25 ր.	առաւ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՏՆԻ ՑԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և րէցէպտներով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանօններ տրիպէրով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, րէցէպտներով։ Գինը 50 կօպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՁԵՌՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւնները և նրանց շուտափոյթ օգնելը, Բազմաթիւ տնային դեղեր և խորհուրդներ։ Շատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք գրպանի համար, և ամեն յարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրան և թէ ուրիշներին։ Գինը 30 կօպ.։

3) «ԾԻԾԱՂԻ ՏԿՃԱՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ անէկդօտները ու սրախօսութիւնների ժողոված։ Ծիծաղաշարժ տկճարի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻԲՐ ՆՈՒԷՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Ներկարարի շալվարը» ծիծաղաշարժ վօդևիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Րաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թիւրքական կռիւներից, դիակների նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կօպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվօդով։ (Մարկաներ չը ընդունել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ)։ Հասցէս՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ.կ.) 327. 100—90

ՀՕՆՕՐՐԷԱ

ունենալու դէպքում, թէ սուր և թէ խրօնիքական բնաւորութեան, նոյնպէս և նրա հետևանքների ժամանակ պէտք է ընդունել

„Ա Ր Մ Ա Տ Ի Ն"

դեղը։ «Արմատինը» միանգամայն անվնասակար է օրգանիզմի համար և աջողութեամբ կարող են գործածել թէ տղամարդիկ և թէ կանայք։ «Արմատինը» գործածելու ժամանակ չէ պահանջվում ոչ մի սրսկումն, լուացումն, խարումն, խողովակի լայնացումն և այլն։ Կատարելապէս բուժվելու համար պիտի գործածել 6 արկղիկ։

«Արմատինի» 1 արկղիկը արժէ 1 ր. 75 կ.։

Վաճառվում է դեղատներում եւ դեղավաճառանոցներում։

Կեղծիքներից խուսափելու համար՝ պահանջեցէք միայն Ա. Եա. Սկուլեանցի «Արմատինը», ապրանքի էտիկէտով։

(հ. կ.) 174. 0—5

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՏԷՐ-ՌՈՒԲԻՆԵԱՆԻ
Հայաստանի տնտեսական հեռանկարները
գրքոյկը
Գինն է 20 կօպէկ։

Յիշեալ գրքոյկը ցանկացողները թող դիմեն «Մշակի» խմբագրութեանը, կանխապէս ուղարկելով գրքոյկի արժէքը և ճանապարհածախսի համար էլ 14 կ.։

(օ. մ.) 198. 5—5

Նոր-Ջուղայի ազգային դպրոցների համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ԵՐԿՈՒ ՈՒՍՈՒՑԻՉ
աւարտած Ներսիսեան դպրոցը կամ Գէորգեան ճեմարանը։ Ուսուցիչներից մէկը վարելու է նաև տեսչի պաշտօն։ Ցանկացողները ստանձնել այդ պաշտօնները, պէտք է դիմեն «Մշակի» խմբագրատանը՝

214. Հ. Առաքելեանին։ 2—2

„Մշակի" խմբագրատան
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1)	Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բարայեանի	50
2)	Նոր կեանքի շեմքում, դրամ.-էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Բ-ի	40
3)	Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի	60
4)	Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի	50
5)	Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ. Ալ. Առաքելեանի . . .	50
6)	Մագդա, դրամա, 5 գործ. Լեոն Մանուէլեանի	40

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(3) 0—4

ԳԻՆԵԳՈՐԾՆԵՐԸ ԵՒ ԱՅԳԵԳՈՐԾՆԵՐԸ

կարող են ապահովել իրանց խաղողի այգիները և պտղատու ծառերը ամեն տեսակ սընկային հիւանդութիւններից և միջատներից՝ բժշկելով քիմիկոս ԺԻՄԷԼԻ հնարած պղնձային՝ երկ-ծծմբային ԱԼԴԷԳԻԴՈՎ։

ԺԱԿՄԷՆ VV ՀԵՂՈՒԿԸ ձեռնտու կերպով փոխարինում է՝ թէ արժէքով, թէ աշխատանքով և թէ հետևանքներով՝ պղնձէ արճասպը, ծծումբը և այլ պրէպարատները։ Վեցերորդ տարին է, որ Քութայիսի և այլ նահանգներում 100 դեսեատինից աւելի խաղողի և 30 դեսեատինից աւելի պտղատու այգիներ աջող կերպով բուժվել են VV ՀԵՂՈՒԿՈՎ։ Բացատրութիւնները, վաւերագրերը և գները ուղարկվում են ձրի։ Քութայիսում գտնվող «ԿԼՕ-ԺԳՈՒՐՈՒԼԻԻ» ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՈՐԹԵՐԻ ՏՆԿԱՐԱՆԸ առաջարկում է ամերիկական պատուաստված որթեր և գիբրիդ տաւաջացնողներ։

Վաճառքը Քութայիսում։ Առևտրական Տուն

Ն. Մ. ՋԱՆԷԼԻՁԷ եւ „ԿԼՕ-ԺԳՈՒՐՈՒԼԻ"

(հ. կ.) 218. 3—1

„ԳԻՐ" ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑ ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
ՆԱՐՆՋԱԳՈՅՆ ԳԻՐՔ
Сборникъ дипломатическихъ документовъ
РЕФОРМЫ ВЪ АРМЕНІИ.

Գինն է 1 ր. 20 կ., ճանապարհածախսով 1 ր. 60 կ., վերադիրով 1 ր. 70 կ.։

Դիմել՝ Книжный магазинъ «ГИРЪ» въ Тифлисѣ. 219. 1—1

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ա. ՎԱՆՁԵԱՆՑԻ ծախքով լոյս ընծայեց
Նիւթեր հայ մելիքութեան մասին
Բ. պրակ՝
ԴՕՖԵԱՆՔ և ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՔ

Գրեց Կարապետ եպիսկոպոս։ ◆—◆ Գինն է 50 կօպէկ։

«Նիւթերի» Ա. պրակը՝ Դիզակի Մելիքութիւնը Սաքել վարդապետի արժէ 30 կօպ.

Դիմել՝ Въ Армянское Этнографическое О-во. Тифлисъ.

(կ. հ.) 173. 6—6

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
Տ. Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բագու, Կրասնովօդսկայա փ. տ. Աւան-Իազբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50.

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս ԴԻԶԵԼ շարժիչներ (մօտօրներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզօնական անգլիական շարժիչներ, (մօտօրներ) «ԿՐՕՍԼԷՅ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի ույժին 1/2 ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասօսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլէքտրական մեքենաներ և պլատոյքներ յայտնի «Դինամօ» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լօկօմօբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, տրակտօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur

(հ.կ.) 551. 0—86

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лоирсъ-Меликовская улица, домъ казенный.